ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

137-19

« 29» հուլիսի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ղեկավարի 2019 թվականի հուլիսի 22-ի թիվ 25 որոշումը:

Առդիր 2 թերթ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Վահագնի, (0322) 69537, vahagni.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 25

ԿԱՌԼԵՆ ԵՎ ԳՅՈՒԼՓԵՐԻ ՎԱՐԴՈՒՄՅԱՆՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱԿՏԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 116-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետերով, 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշումով, քանի որ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Կառլեն Վարդումյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կառլեն և Գյուլփերի Վարդումյաններին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայական թիվ 1743834) 06-103-0019-0006 ծածկագրով 0,0939 հա տնամերձ հողամասին տրամադրել Վահագնի համայնք 6-րդ փողոց 8 փոստային հասցե:

2.Օրինականացնել Կառլեն և Գյուլփերի Վարդումյաններին սեփականության իրավունքով պատկանող, Լոռու մարզի Վահագնի համայնք 6-րդ փողոց 8 փոստային հասցեում գտնվող, 06-103-0019-0006 ծածկագրով 0.0939 հա տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 130,00 քմ արտաքին չափերով բնակելի տունը:

3. Մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շենքերը,շինությունները օրինական ճանաչելու դեպքում նախատեսված վճարները չեն գանձվում:

4. Սույն որոշումից բխող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ